

Ահա մարտիրոս վկայից

Սուրբ արեան յիշատակ  
Հանեմք մինչև յերկինս՝

Ողորմութեան Աթոռոյդ առաջ.

Բաւ և շատ եղև առ ի խրատ մեզ,

Ո՛վ բարեգութ Հայր,

Միթէ մոռանաս զմեզ իսպառ:

Դեռ ևս թողնու ի տառապանս,

Տէր, ապաւեն մեր դու յազգէ մինչև յազգ:



«ՔԱՐՈՋԵԱՅ ՅԱՌԱՔԵԱԼՍՆ»

Ե Ի

«ՅՈՅՍ ՅԱՐՈՒԹԵԱՆ».

Պաշտամունքը եկեղեցւոյ կարգաւորութեան մէջ ամէնից աւելի հաստատուն, քիչ փոփոխուող տարրն է իսկապէս: Մի անգամ որ կրօնական գաղափարն ու զգացմունքը համապատասխան արտայայտութիւն են գտնում՝ այստեղ՝ նոյնանում են շուտով այն կաղապարի հետ, որի մէջ ձուլուել են, և այդ կաղապարը գտնում է մի նուիրական սրբութիւն. համայնքի աչքն ու ականջը վարժուում է միշտ նոյն պատեանի մէջ տեսնել իւր հոգւոյ գանձը՝ նորա վերայ եղած փոքրիկ փոփոխութիւններն անգամ իբրև խորթութիւն, իբրև մի տեսակ սրբապղծութիւն է նկատում այնուհետև: Սակայն և այնպէս այդ փոփոխութիւններն անդադար տեղի են ունենում՝ յաճախ բոլորովին աննկատելի կերպով, դարերի ընթացքում, և մինչև մեզ թուում է թէ նոյնն ենք պահել, ինչ որ էր հազար տարիներ առաջ՝ այժմեանի և նախկինի փոքր ի շատէ լուրջ համե-



մատուցիւնը ցոյց կտայ իսկոյն, որ բոլորովին նոյնը չէ։ Մեր եկեղեցին որչափ և նախանձախնդիր ու հետամուտ է եղել միշտ էական մասերում հարազատ պահելու նախնական աւանդութիւնները՝ թոյլ է տուել այնուամենայնիւ, գտնուելով մանաւանդ արտաքուստ խիստ բարդ պայմանների ներքոյ, որ շատ երկրորդական կէտեր փոփոխութեան ենթարկուին ժամանակի ընթացքում, և այսպէս յառաջ գան մեր ժամակարգութեան մէջ երեւոյթներ, որ մեր աչքում ս. Լուսաւորչից մնացած աւանդութիւնների յարդ ունին, բայց իրօք նոր ու նորագոյն ժամանակի ծնունդ են։ Մենք կը բաւականանանք երկու զգալի փոփոխութիւնների վերայ մատնացոյց անելով, որ հաւատոյ հանգանակի և պատարագամատոյցի «Ի սո՛ւրբ, ի սո՛ւրբ» դարձուածքի մէջ են մտել։

Մեր բոլոր տպագիր և ժէ. դարից ի վեր գրուած գրեթէ բոլոր ձեռագիր ժամագիրքների ու խորհրդատետրների մէջ հանգանակի ս. Հոգւոյ վերաբերեալ բաժինն ունի «Քարոզեաց զառաքեալն» խօսքերը, այդպէս և ասում են բոլոր եկեղեցիներում, այդպէս ուսուցանում են դպրոցներում, թէ «առաքեալ» Փրկչի համար պէտք է հասկանալ, որի, իբրև Աստուծոյ կողմից ուղարկուածի, մասին վկայեց ս. Հոգին՝ իջնելով նորա վերայ մկրտութեան ժամին Յորդանանում։ Սակայն եթէ փոքր ինչ խոր մտածենք՝ կտեսնենք որ այդ արտայայտութիւնը թէ մոքի և թէ լեզուի կողմից շատ տարօրինակ է, եթէ ոչ բոլորովին անկարելի։ Ուղիղ է նկատում Փեշտմալճեան պատուելին<sup>1</sup>, թէ «Ոչ ուրեք ի գիրս սոսկապէս առաքեալ ձայնիւ նշանակի Քրիստոս, այլ յարագրութեամբ այլոյ բացորոշ բառի» (օր. եբր. Գ. 1)։ որչափ ուրեմն աւելի օտարօտի պէտք է համարուի այդպիսի անսովոր անուն հանգանակի մէջ, ուր բնականաբար ամէն ջանք գործ գրուած պէտք է լինէր ըստ կարելոյն պարզ, ոչ մի թիւրիմացութիւն չվերցնող խօսքեր գործածելու։ Գրեթէ նոյնչափ օտարօտ է

<sup>1</sup> Լուսաշաւիղ. Կ. Պոլիս, 1848. եր. 155:



ըստ մեզ ս. Հոգին առանց միջնորդի իբրև քարոզիչ ներկայացնելը, քանի որ «ի հեծութիւնս անմռունչս» խօսում է նա մարդոց հոգու մէջ, և ապա, սոցա բերանով, բարձրաձայն քարոզ են դառնում՝ նորա խորհրդաւոր թելադրութիւնները։ Հարց է նաև, թէ արդեօք Հայոց դասական լեզուն «քարոզել» բայի համար այսպիսի հայցական կարգ է ընդունել։

Իրողութիւնն այն է յամենայն դէպս, որ թէպէտ այս դարձուածը բաւական հին է արդէն, բայց և անտարակոյս սխալ. ճշգրիտ քննադատութիւնը ոչ մի կասկած չի թողնում, որ սկզբնականը եղել է՝ «քարոզեաց յառաքեալսն»։ Հ. Յ. Գաթրճեանի մանրաքննին՝ Հ. Յ. Տաշեանի հմուտ գրչի տակից անցած, ուսումնասիրութիւնները<sup>1</sup> այդ խնդիրը պարզել են արդէն որչափ հարկաւոր է. և ժամանակ է, որ ճշմարտութեան ձայնը լսենք և ուղիղ ընթերցուածը վերականգնենք։ Եթէ փոփոխութիւնը բնական կարգով յառաջ եկած լինէր՝ հին բառերը կամ հին իմաստը դիտակցօրէն նորով փոխարկուէին ու դարերի գործածութեամբ սրբագործուէին, այլ ևս դէպի հինը դառնալու հարկ չէր լինի անշուշտ. բայց ներկայ փոփոխութիւնը ակնյայտնի թիւրիմացութեան ծնունդ է, սխալ ըմբռնում է մէջ բերում, և այն՝ հաւատոյ վերաբերեալ խնդիրներում։ Ինչպէս Հ. Գաթրճեան ուղիղ նկատում է,<sup>2</sup> — «Այս վերջին ընթերցուածը՝ «քարոզեաց յառաքեալսն» որն որ միայն հարադատն է, իսկ և իսկ «դառաքեալն»ի չփոխուեցաւ. հապա նախ եղաւ՝ «քարոզեաց զառաքեալսն», ինչպէս որ ունին շատ գրչագիրներ, որն որ այստեղ իմաստ մը չտալուն համար փոխուեցաւ եղաւ՝ «քարոզեաց զառաքեալսն»։ — Որ սկզբնականը «յառաքեալսն» է եղել՝ դորա առաջին անհերքելի ապացոյցն այն է, որ Հայոց հանգանակի նման և հաւանականաբար նոյն ծա-

<sup>1</sup> Հանգանակ հաւատոյ. Վիեննա, 1891. եր. 15 և Սրբազան պատարագամատոյցք Հայոց. Վիեննա, 1897. եր. 308, 506 և այլն։

<sup>2</sup> Նոյն Հանգանակ հաւատոյ, եր. 15։



գումն ունեցող<sup>1</sup> յունարէն երկու հին օրինակների մէջ  
 ևս<sup>2</sup> համապատասխան արտայայտութիւնն ենք գտնում.  
 իսկ ուրիշ ոչ մի հանդանակի մէջ այսպիսի խօսքեր չկան: Ս.  
 Եպիփանիոսի պահած օրինակն ունի λαλοῦν ἐν ἀποστόλοις,  
 կեղծ Աթանասեան օրինակը՝ κηρῶσαν (կամ κηρῶμενον) ἀπο-  
 στόλοις, երկու դէպքում ևս խօսքը Քրիստոսի առաքելա-  
 ների մասին է, և ոչ առաքելալ Քրիստոսի. ա. -ը բերում  
 է «յառաքելալ» ներդոյականի մտքով, բայց «խօսել» բայի  
 հետ, բ. -ը «քարոզել» բայն է դործածում, բայց «առա-  
 քելոց»՝ արական հոլովով: Եւ հայերէնի «յառաքելոն»  
 բառը երկու իմաստով ևս թարգմանել կարելի է. կամ  
 իբրեւ նախդրիւ արական, ինչպէս օր. Փեշտմալճեան սլա-  
 ւաւելին է բացատրում. «Որպէս Հոգին Սուրբ էր՝ որ էջ  
 աղանակերպ ի Յորդանան ի վկայութիւն աստուածու-  
 թեանն Քրիստոսի, նոյն Հոգին էր, որ էջ հրեղէն լեզուօր  
 ի վերնասունն քարոզել յառաքելսն և ծանուցանել նո-  
 ցա զգաղանի խորհուրդս հաւատոցն Քրիստոսի». կամ  
 իբրեւ ներդոյական, որ Լամբրոնացին գործիականի վերա-  
 ծելով մեկնում է. «Զի քարոզեցաւ նա առաքելովքն յո-  
 լորսս աշխարհի»:

Հ. Դաթրճեանի և Հ. Տաշեանի ուսումնասիրութիւն-  
 ները բերել են վերջինիս այն եզրակացութեան, որ մեր  
 այժմեան սլաւարադամատոյցի գրեթէ վերջնական ձեա-  
 կերպութիւնը Լամբրոնացին է տուել.<sup>3</sup> ուրեմն առան-  
 ձնապէս հետաքրքրական է մեզ համար, թէ սա ինչպէս է  
 կարգացել և ըմբռնել հանգանակի մեզ զբաղեցնող խօս-  
 քերը: Այն հանգամանքից, որ նա իւր սլաւարագի մեկ-

<sup>1</sup> Ինչպէս այս խնդրով պարապող դանազան գիտնականներ  
 մէկի կամ միւսի համար աշխատել են ապացուցանել:

<sup>2</sup> Եպիփանիոսի աւանդած Պաղեստինեան օրինակի ընդար-  
 ձակը և ս. Աթանասին վերագրած Ἐρμηνεία εἰς τὸ σύμβολον. Sbo.  
 Bibliothek der Symbole und Glaubensregeln, L. Hahn. Breslau, 1897.  
 Եր. 135—139. նաև Die Armenische Kirche, A. Ter-Mikelian. Leipzig,  
 1892. էջ 22—25.

<sup>3</sup> Պատարագամատոյցը, Եր. 508.



նութեան մէջ այս մասի վերնագիրը է գնում՝ «Որ էջն ի Յորդանան աղանակերպ իջնամբ ի վերայ Միածնին, և քարոզեաց զառաքեալն Որդի՝ ընդ ձայնին հայրականի», և ապա վերոյիշեալ մեկնութիւնն է տալիս, Հ. Գաթրճեան հետեւեցնում է, թէ նա երկու ընթերցուածն էլ ունեցել է աչքի առաջ։ Սակայն քանի որ նորա առանձին պահուած պատարագամատոյցի մէջ, որ քիչ անգամ է ընդորինակուել և ուրեմն համեմատաբար սակաւ փոփոխութեան ենթարկուել, միայն «քարոզեաց յառաքեալն» ընթերցուածը կայ.<sup>1</sup> քանի որ յիշեալ մեկնութիւնն ևս բոլորովին համաձայն չէ վերնագրին, այլ «որ էջն ի Յորդանան» խօսքերը բացատրելուց յետոյ աւելացնում է. «Յայսմ հետէ և զանհատականն ի նմանէ ցուցանէ տուչութիւնս, զի քարոզեցաւ նա առաքելովքն յոլորտս աշխարհի, և ընակեաց ի սուրբս», — պարզ է որ «անհատական տուչութիւններ» անուանում է «առաքելովք քարոզութիւնն» և «ի սուրբս ընակիլը», և որովհետեւ այս վերջինը վերնագրի մէջ չէ յիշուած, բայց բացատրուած է՝ մենք իրաւունք ենք համարում ենթադրելու, որ վերնագիրը փոփոխուած է գրչադիրներին ձեռքով և ուշ ժամանակի ըմբռնման յարմարեցրած, մինչ Լամբրոնացին ինքը կարդացել է «քարոզեաց յառաքեալն» և հասկացել քարոզութիւն յանձին առաքեալների, և ոչ երբէք Յորդանան իջնելով Փրկչի Աստուծոյ Որդի լինելն հռչակելը։

Սակայն եթէ ընդունենք իսկ, որ արդէն Լամբրոնացու ժամանակ «յառաքեալն» ընթերցուածի հետ զուգընթացաբար դործ էր ածուում և տարածուում «զառաքեալն» ընթերցուածը՝ հնագոյնն ու միակ ուղիղը կմնայ

<sup>1</sup> Նոյն. եր. 536. Ս. Ներսիսի Լամբրոնացու խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ և Մեկնութիւն խորհրդոյ պատարագին. Վենետիկ, 1847. եր. 209: Պէտք է նկատել, որ այս հրատարակութեան մէջ հանգանակի մեկնութիւնն ամբողջապէս պակասում է. եկամուտ չէ արդեօք այն՝ — միջոց չունեցանք առ այժմ մեր ձեռքին եղած աղբիւրներով պարզելու։



միշտ առաջինը, որ դանում ենք բոլոր մեր հին և ընտիր ձեռագիրներում, երբեմն նաև նոր ու նորագոյն այնպիսի ձեռագիրների մէջ, որոնք ընտիր օրինակներից են արտագրուել, կամ այնպիսի յիշատակարանների մէջ (թուղթ, պատմութիւն և այլն), որոնք որ և է պատճառով յառաջ են բերել հաւատոյ հանգանակը, և սա գործածութիւնից դուրս մնալով՝ չի սրբադրուել։ Այսպէս օրինակ Սերէոսի պատմութեան մէջ դանում ենք Ներսէս Գ. Շինող կաթողիկոսի Յունաց Կոստանդ կայսեր գրած թուղթը և այստեղ մեզ յայտնի ամենահին օրինակը Հայոց եկեղեցում այժմ գործածուած հանգանակի, ուրեմն է. դարու պատմիչ Սերէոս վկայ է հանդիսանում, որ իւր ժամանակ «քարոզեաց յառաքեալս» է կարդացուել։ Պէտք է նկատել, որ ինչպէս Սերէոս, այնպէս և մի շարք ձեռագիրներ բերում են «յառաքեալս» առանց և յօդի և այդ համապատասխան է յունարէնին. քանի որ վերև յիշուած երկու հանգանակների մէջ ևս ἀποστόλοις կամ ἐν ἀποστόλοις առանց յօդի է. մի հանդամանք, որ ուրիշների հետ միացած,<sup>1</sup> մեզ համար աւելի հաւանական է դարձնում, թէ «յառաքեալսն» տրականի իմաստով պէտք է հասկանալ և այստեղ պարզապէս Հոգեգալստեան խորհուրդն արտայայտած գանել։ Խօսքի շարայարութիւնն ևս այդ է պահանջում. եթէ հանգանակ կազմողի նպատակն է եղել ս. Հոգւոյ բոլոր «տուչութիւնները» մի առ մի յիշատակել, ապա ինչպէս կարելի էր Յորդանանից ընդհանուր քրիստոնէութեան անցնել, առանց Նորա ամէնից աչքի ընկնող «տուչութիւնը» վերնատան մէջ առաքեալների վերայ իջնելը, յիշելու։

Դալով մեր ակնարկած միւս սխալին՝ նման երեւոյթ ենք նկատում։ Տպագիր ու վերջին դարերու ձեռագիր պատարագամատոյցների համաձայն մեր եկեղեցում այժմ

<sup>1</sup> Ինչպէս օր. այն, որ յունարէնի λαοὶν բառը գործածող օրինակի մէջ է ներգոյական ἐν ἀποστόλοις, մինչ մեր հանգանակի նման κηρύττει գործածող ἀποστόλοις տրական հոլով է դնում։



կարգացում է. «Ի սուրբ ի սուրբ պատուական մարմնոյ  
և յարենէ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի  
ճաշակեացուք սրբութեամբ, որ իջեալ յերկնից բաշխի ի  
միջի մերում. Սա է կեանք, յոյս, յարութիւն, քաւութիւն  
և թողութիւն մեղաց, և այլն»։ Ինչպէս է եղել նախնա-  
կանը՝ դորա հնագոյն օրինակը դանում ենք Ժ. դա-  
րում ապրող Խոսրով Անձեացու պատարագի մեկնութեան  
մէջ,<sup>1</sup> «Ի սուրբ պատուական մարմնոյ և յարենէ Տեառն  
մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի՝ որ բաշխի ի միջի  
մերում. սա է կեանք, յոյս յարութեան, և քաւութիւն և  
թողութիւն մեղաց մերոց». Ժամանակի ընթացքում բա-  
ւական ճոխնցել ու ընդարձակուել է ուրեմն այս ամբողջ  
պարբերութիւնը, բայց մինչ միւս փոփոխութիւնները գի-  
տակցօրէն են եղել՝ «յոյս, յարութիւն» ակներե թիւրի-  
մացութիւն է, յառաջ եկած անշուշտ արտասանելու գիւ-  
րութիւնից։ Ահա թէ Անձեացին ինչպէս է բացատրում  
այդ մասը. «Սա է կեանք. վասն զի ասաց Տէրն մեր, Որ  
ուտէ զհացս զայս՝ կեցցէ յաւիտեան։ Եւ յոյս է յարու-  
թեան, քանզի և զայս ասաց Տէրն մեր, թէ Յարուցից  
զնա յաւուրն յեանում, որ ուտէ ի սմանէ, և այլն»։ Լամ-  
բրոնացին ևս նոյն կերպ կարգալով իւր պատարագի մեկ-  
նութեան մէջ,<sup>2</sup> «Սա է կեանք, յոյս յարութեան, քաւու-  
թիւն և թողութիւն մեղաց», բացատրում է. «Սա է  
կեանք՝ ոչ մարմնոց, այլ հոգւոց. Սա է յոյս՝ ոչ ապակա-  
նացու փառաց, այլ անապականին. Սա է քաւութիւն աղ-  
տեղացելոցն ի ժանեաց վիշապին, և այլն»։ «Յոյս յարու-  
թեան» կարգում ենք գեռ օր. Մ. Աթոռի մատենադա-  
րանի 1385 թ.-ին գրուած մի Ժամագրքի և բոլոր ուրիշ  
աւելի հին ձեռագիրների մէջ։<sup>3</sup> Եւ եթէ ուղիղ մտածենք,

<sup>1</sup> Վենետիկ, 1869. եր. 58.

<sup>2</sup> Վենետիկ, 1847. եր. 451. մինչ Երուսաղէմի ապագրու-  
թիւնը (1842 եր. 56) և նոր ժամանակի ձեռագիրներ այստեղ ևս  
վերնագիրը փոխում՝ «Յոյս, յարութիւն» են դարձնում՝ հակառակ  
ստորեւ տուած բացատրութեան։

<sup>3</sup> Համ. Պատարագամատոյցք. եր. 296 և այլն։



ուրիշ կերպ անհասկանալի էլ է բոլորովին: Ի ցոյց ժողովրդեան բարձրացրած հաղորդութեան սուրբ խորհուրդը «յարութիւն» անուանել էլի մի միտք կունենար, բայց սոսկ միայն «յոյս» — ինչպէս ուղենք ձգձգենք՝ ուղիղ խմաստ չի տայ. մինչդեռ «յոյս յարութեան» բոլորովին պարզ է, մանաւանդ վերև յիշուած բացատրութիւններէց յետոյ, և առանց մեր խօսքը երկարացնելու կարող ենք հաստատապէս պնդել, որ ուղիղն այդ է և այդպէս պէտք է արտասանել պատարագի մէջ:

Կարգապէս Վարդապէս



## ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ԵՒ ՄԵՐ ԿԱՆՈՆԱԿԸՆ ԻՐԱՌՈՒՆՔԸ

Կանոնագիրք ասելով մեզանում հասկանում են այն ձեռագիրները, որոնց մէջ գրեթէ բացառապէս կանոններ, կանոնական խրատներ և առհասարակ կանոնական նիւթեր են պարունակուում: Իրանք ձեռագիրները «կանոնագիրք» վերնագիրը չունին իրենց գլխին, առաջին վերնագիրը որ գրուած է լինում այս ձեռագիրների սկզբի երեսին՝ լինում է առաջին կանոնագրութեան յատուկ վերնագիրը (օր. «վարդապետութիւն առաքելոց») և ոչ թէ ամբողջ հաւաքածուի ընդհանուր վերնագիրը: Կանոնագիրք են անուանում այդ ձեռագիրները մի քանի ձեռագիրների յիշատակարաններում:

Բազմաքիւ են մեզ հասած կանոնագիրք ձեռագիրները: Միայն Մայր Աթոռի Մատենադարանում մօտ 50 հատ կայ: Գոնէ մի մի օրինակ կայ նաև իւրաքանչիւր կոնսիստորիայում, հոգևոր կառավարութիւններում, ինչպէս և էջմիածնի Սինոդում: Քիչ չեն և այն օրինակները, որ ցրուած են մասնաւոր անձերի և այլ և այլ հիմնարկութիւնների մատենադարաններում թէ Ռուսաստանում